ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի գործընկերներ,

սիրելի համայնքի բնակիչներ,

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա կապակցությամբ:

Տեղական ինքնակառավարումը մեր երկրի ժողովրդավարական համակարգի հիմնասյուներից է, որը հնարավորություն է ընձեռում համայնքների բնակիչներին անմիջականորեն մասնակցել իրենց բնակավայրերի կառավարմանը, զարգացմանն ու բարեփոխման գործընթացներին: Այս կառույցների արդյունավետ գործունեությունն անմիջականորեն պայմանավորում է համայնքների կայուն զարգացումը, բնակչության բարեկեցությունը և պետական իշխանության ամբողջականությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների պատասխանատու ու նվիրված աշխատանքն արժանի է ամենաբարձր գնահատանքի: Ձեր հետևողական ու նպատակասլաց ջանքերի շնորհիվ է, որ մեր համայնքները շարունակում են զարգանալ, բարեկարգվել և դառնալ ավելի հարմարավետ բնակության համար:

Այս հիշարժան օրը շնորհակալություն եմ հայտնում համայնքային կառավարման համակարգի բոլոր ներկայացուցիչներին՝ ձեր ծառայության, նախաձեռնողականության և հանրային շահի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի համար:

Մաղթում եմ նոր հաջողություններ, աշխատանքային անսպառ եռանդ և ամուր կամք՝ մեր համայնքի ու հայրենիքի բարօրության համար: Թող ձեր նվիրումն ու մասնագիտական փորձը շարունակեն ծառայել մեր երկրի հզորացմանը և համայնքային կյանքի զարգացմանը: